505

1. Աստծո բանակն է գնում՝
Հաղթելով աշխարհին,
Մենք երգում ենք ու ցնծում,
Որ մահը պարտվեց:

Էմմանուել, Աստծո բանակն է սա,
Էմմանուել, մենք պաշտում ենք Նրան,
Էմմանուել, Նա է մեր Մեսիան,
Էմմանուել (3) Աստված:

2. Սուրբ Հիսուսն է աշխարհ եկել,
Պաշտենք մենք Նրան,
Նա է մեր զորագլուխը,
Օրհնենք մենք Նրան:

3. Հավատքի վահանն ունենք մենք,
Զինվել ենք ահա,
Երբեք չենք հուսահատվի մենք,
Տերն է մեր Արքան:

4. Աստծո բանակն է գնում՝
Հաղթելով դժոխքին,
Եվ երգում ենք՝ ալելուիա՛,
Օվսաննա՛ Գառին:

Էմմանուելն է գնում առջևից,
Էմմանուել՝ հարուցյալ, կենդանի,
Էմմանուել, որ հաղթեց թշնամուն,
Էմմանուել (2) Աստված:

Պատրաստված է Հոգևոր Արխիվի Կողմից | hogevorarchive.com | ergaran.com | 2025